

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ Ի ՆՊԱՍՏ ՄԵՐ ՅՕԲՆ-
ԼԵԱՆԻՆ

— օ —

ՀԱՅ ԳՈՐԾԱՆՈՐԵՆԵՐԸ ՆԱԽԱՉԵՌՆԵՐԿ

Ինչո՞ւ ամեն մարդ իր լուսման օտյ՝

Երէկ (սեպտ. 25) հաճելի անակնկալ մը
ունեցանք:

Հայ գործաւոր մը, Յակոբ Յովհաննէսեան
անունով, խմբադրատուն ներկայացաւ իր
բանուորի տարազով և ըսաւ.

— Մենք Ազատ-Կափու գանուող Օննիկ
էֆ. Տէրունեանի շինիի Փարբիկային գոր-
ծաւորներէն ենք, օրական 10 — 12 դրուշ կը
շահինք... ուզեցինք հայերէն գիրերու գիւ-
տին համար ըլլալիք յօրեկեանին առթիւ
մէջերնիս հանդանակութիւն մը ընել և 284
դրշ. հաւաքեցինք, զոր ահաւասիկ ձեզի կը
յանձնենք: Մենք ուսումնական չենք, բայց
գիրին ու գեղքին յարգը գիտենք... մեր
փրկութիւնը ան է:

Եւ մարդը սեղանին վրայ դրաւ հանգա-
նակուած գումարը:

Այս ինքնաբերական ժէսթը այնքան գե-
ղեցիկ էր, որ յուզումով առինք դրամը:

— Ձեր թերթին մէջ գրեցէք, որ մեր օ-
րինակին հետեւելով ուրիշներն ալ տան, — շա-
րունակեց գործաւորը, — մենք արդէն ուրիշ-
ներէն դարձեալ պիտի ժողովենք: